ԱՄԱԼՅԱ ՍԱՀԱԿՅԱՆ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.183

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդիրը՝ նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Մշակվել են տարրական դպրոցի ուսուցման գործընթացում դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման արդյունավետությունն ապահովող նորագույն տեխնոլոգիաների և փոխներգործուն մեթոդների կիրառման վերաբերյալ նոր մոտեցումներ, համաստեղծագործական դասերի, ստեղծագործական առաջադրանքների, վարժությունների համալիր, որոնք կհարստացնեն տարրական դպրոցի մանկավարժությունը տեսական և մեթոդական նոր դրույթներով: Այն կարող է օժանդակ տեսամեթոդական նյութ հանդիսանալ տարրական դպրոցի ուսուցիչների վերապատրաստման և նրանց մեթոդական պատրաստության կատարելագործման համար: Օրինակ կարող է ծառայել նախագծային տեխնոլոգիայի կիրառումը, որի արդյունավետությունը պայմանավորված է սովորողների նախագծային ստեղծագործական մտածողության առկայությամբ, երևույթների, իրավիճակները տրամաբանելու կարողությամբ, հետաքրքրություններով, նախագծի բովանդակության և նպատակի ընտրության, ուսումնասիրման օբյեկտի կամ երևույթի տեղեկատվական դաշտի առկայությամբ: Ըստ այս տեխնոլոգիայի՝ աշակերտները, ելնելով սեփական հետաքրքրությունից,

ուսուցչի հետ միասին նախագծում են իրենց համար ծանոթ կամ կարևոր գործնական որևէ խնդիր: Այս տեխնոլոգիայի նպատակը ոչ միայն գիտելիքների ձեռք բերելն է, այլև դրանք գործնականում ճիշտ կիրառել կարողանալն ու դրանց օգնությամբ առօրյա կյանքում շատ խնդիրներ լուծելը:

Մշակվել է նաև համաստեղծագործական ուղղվածություն ունեցող դասերի, ուսումնական առաջադրանքների, վարժությունների, մեթոդների և տեխնոլոգիաների համալիր, որն ապահովում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումն ու ինքնազարգացումը: Ստեղծագործել կարող են բոլոր երեխաները, անկախ տարիքից: Մարդն իր էությամբ ստեղծագործող էակ է, իսկ մանկավարժի խնդիրն է բացահայտել, զարգացնել և հարստացնել երեխայի բնատուր օժտվածությունն ու այն գործնականում օգտագործել տարբեր մանկավարժական խնդիրներ լուծելիս: Ստեղծագործական առաջադրանքները, համալիրը օգնում են բացահայտելու յուրաքանչյուր երեխայի ներքին ստեղծագործական հնարավորությունները, նպաստում են երեխաների միջանձնային հարաբերությունների ձևավորմանը, լուծելու կրթական և դաստիարակչական խնդիրներ, որոնք այսօր դպրոցում շատ կարևորվում են:

Բանալի բառեր և արտահայտություններ. *ստեղծագործական կարողություններ, նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ, համաստեղծագործական դասեր, վարժությունների համալիր, անձի զարգացում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է ուսումնադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականի ստեղծագործական ներուժի, ընդունակությունների և կարողությունների զարգացման առաջնահերթ խնդիրների լուծմամբ՝ հաշվի առնելով ՀՀ նոր հանրակրթության պետական չափորոշիչի պահանջները և այն հիմնարար տեսակետը, որ տարրական դպրոցի ուսումնական առարկաների բովանդակությունը, ուսուցման տեղեկատվական դաշտի ընդլայնումը և

նորագույն տեխնոլոգիաների կիրառումը անհրաժեշտ գործընթացներ են համարվում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացման համար:

Այս համատեքստում ժամանակակից կրթության նպատակն է հասարակության արդի պահանջներին համապատասխան ստեղծագործական մտածողություն ունեցող, ճկուն և զարգացած սերնդի ձևավորումը, որն ի զորու կլինի դիմագրավել ցանկացած մարտահրավերների, ակտիվորեն կյուրացնի անցյալի աշխատանքային, մշակութային փորձն ու գիտելիքները, կտիրապետի ճանաչողական, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, տեխնոլոգիական կարողությունների, կկարողանա ստեղծել նորն ու ավելի կատարյալը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այսօր գերակա խնդիր է դարձել կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության կազմակերպման և ստեղծագործական կարողությունների զարգացման ձևերի, մեթոդների, միջոցների և տեխնոլոգիաների համալիրի մշակումն ու ներդնումը տարրական դպրոցի ուսումնաստիարակչական գործընթացում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ներկայումս հանրակրթության էական բարեփոխումը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում. ուսուցման նոր մոդելներում առաջնային է դիտվում սովորողների հմտությունների, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության, հաղորդակցական, նախագծային կարողությունների ձևավորումը, կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացի կազմակերպման հետևյալ ուղղություններով՝

- կրտսեր դպրոցականների ներգրավումը ուսումնական-ստեղծագործական, համաստեղծագործական գործունեության մեջ՝ մարդասիրական, անձնակենտրոն, մշակութաբանական, արժեբանական, գործունային և այլ

մոտեցումների հիման վրա, որի արդյունքում առավել վառ են դրսևորվում նրանց ստեղծագործական ընդունակություններն ու կարողությունները,

- համաստեղծագործական դասերի, ստեղծագործական առաջադրանքների, վարժությունների համալիրի ներդնում՝ նորագույն մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ, որը կապահովի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումը,
- ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մակարդակի միջանկյալ և վերջնական հայտորոշումը:

Նշված ուղղություններից յուրաքանչյուրը ներառում է սովորողների ուսումնաստեղծագործական և ռեֆլեքսիվ գործունեությունը: Արդյունավետ գործունեություն ասելով մենք ի նկատի ունենք ստեղծագործական այնպիսի գործունեություն, որն ապահովում է սովորողի ակտիվությունը՝ ուղղված որոշակի արտադրանքի ստացմանը, «սովորողի ստեղծագործական աշխատանքը, որն արժեք ունի թե՛ հասարակության, թե՛ անձի համար» **(Развитие творческой личности …., 1998)**:

Այդ ստեղծագործական աշխատանքներն ուղղված են եղել իրականության ճանաչմանն ու ստեղծագործական վերակերտմանը, նոր, ինքնատիպ հոգևոր և նյութական արժեքների ստեղծմանը:

Դիտարկենք ստեղծագործական գործունեության արդյունքի գնահատման որակական ցուցանիշները, որոնք հնարավորություն են տալիս որոշելու կրտսեր դպրոցականների վերաբերմունքը իրենց և այլոց ստեղծագործական գործունեության և այդ գործունեության իրականացման միջոցների նկատմամբ:

1. Ցուցանիշներ, որոնք բնութագրում են երեխաների վերաբերմունքը ստեղծագործական գործունեության նկատմամբ, նրանց հետաքրքրություններն ու ընդունակությունները, անձնային որակները՝

- անկեղծություն, ճշմարտացիություն, ապրումների անմիջականություն,

- ստեղծագործական գործունեությամբ հափշտակվածություն, որը նպաստում է ստեղծագործական նպատակների իրականացման ընթացքում կամային ջանքերի ակտիվացմանը,
- այնպիսի նոր դրդապատճառների ձևավորում, որոնք երեխաներին իրենց իրականացրած ստեղծագործական գործունեության արդյունքի նկատմամբ խոր բերկրանք են պատճառում,
- ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրության և պահանջմունքների, անդրադարձ (ռեֆլեքսիա) կատարելու ունակության ձևավորում,
- ստեղծագործական մտածողություն, երևակայություն, հնարամտություն և հանկարծաստեղծություն (իմպրովիզացիա), որոնց հիման վրա են ձևավորվում ստեղծագործական կարողությունները,
- ստեղծագործական կարողություններ, որոնք թույլ են տալիս հաջողությամբ կատարել ստեղծագործական առաջադրանքներն ու վարժությունները:

2. **Ցուցանիշներ, որոնք բնութագրում են ստեղծագործական գործունեության միջոցները՝**

- առկա միջոցների համալրում, նոր տարբերակների մշակում, նոր իրավիճակների կիրառում, հին տարրերի, նոր համակցությունների մտահղացում,
- ստեղծագործական խնդիրների, առաջադրանքների և վարժությունների կատարման նոր, ինքնատիպ եղանակների որոնում, կիրառման ընթացքում ինքնուրույնություն և նախաձեռնականություն:

3. **Ցուցանիշներ, որոնք բնութագրում են անհատական ստեղծագործական արդյունքը՝**

- ստեղծագործական արդյունքի ինքնատիպություն, եզակիություն, կատարման և արտահայտման ձևերի անկրկնելիություն,
- ստեղծագործական մտահղացումների իրականացման համար համարժեք միջոցների ընտրություն,

- գործունեության արդյունքի ստեղծագործական ուղղվածություն:

Գ.Վ. Տերեխովայի հետազոտություններում արտահայտված է այն տեսակետը, որ ստեղծագործական առաջադրանքների և խնդիրների համակարգը միմյանց փոխկապակցված ստեղծագործական խնդիրների կանոնակարգված բազմությունն է՝ ուղղված որակապես նոր և անկրկնելի իրավիճակների, երևույթների, օբյեկտների ճանաչմանը, ստեղծմանը, կիրառմանը, ստեղծագործաբար փոփոխմանը:

Մանկավարժական գրականության մեջ ստեղծագործական առաջադրանքը բնորոշվում է որպես այնպիսի խնդիր, որի լուծման համար գիտության մեջ չկա համընդհանուր ընդունված դրույթ կամ կանոն: Յու. Ա. Պոնոմարյովը, անդրադառնալով ստեղծագործական խնդիրների էությանը, դրանք բաժանում է երկու խմբի. առաջին խումբը կազմում են այն խնդիրները, որոնք կարող են լուծվել գիտակցված միջոցների ու եղանակների համակարգված կիրառմամբ: Երկրորդ խմբում այն խնդիրներն են, որոնք բավականաչափ խոր հակասություններ են պարունակում, և լուծման ընթացքում ի հայտ են գալիս նախապես չգիտակցված, չմտածված հնարքներ: Այս խմբերի միջև, այնուհանդերձ, կտրուկ սահմանազատում չկա. դրանք անընդհատ ներթափանցում են միմյանց մեջ **(Пономарев Я., 1976)**:

Այս տեսանկյունից մենք համամիտ ենք Վ.Ի. Անդրեևի այն մոտեցման հետ, որ «Ուսումնական-ստեղծագործական խնդիրը ուսումնական նյութի բովանդակության գործընթացի կազմակերպման այնպիսի ձև է, որի օգնությամբ ուսուցչին հաջողվում է սովորողների համար ստեղծել ստեղծագործական միջավայր, իրավիճակ, ուղղակի կամ անուղղակի ձևակերպել ուսումնաստեղծագործական գործունեության նպատակ ու պայմաններ, և այդ գործընթացում սովորողներն ակտիվորեն տիրապետում են ոչ միայն գիտելիքների, այլև զարգացնում են իրենց ստեղծագործական ընդունակությունները **(Андреев В., 1988)** :

Ստեղծագործական բնույթ ունեցող խնդիրների օգնությամբ ուղղակի կամ անուղղակի առաջադրվում են ուսումնաստեղծագործական գործունեության նպատակը, պայմանները, մանկավարժական պահանջները: Դրանց լուծման ընթացքում ձևավորվում են ստեղծագործական իրավիճակներ, որոնք պահանջում են գործողությունների՝ նախկինում հայտնի կամ անհայտ ալգորիթմի, միջոցների, եղանակների կիրառում **(Пономарев Я., 1976)**: Ըստ Ս.Ա. Նովոսելովի՝ ստեղծագործական խնդիրները ուսուցչի կողմից ստեղծված իրավիճակում սովորողի առջև դրված նպատակներն են: Դրանք սովորողից պահանջում են մտածական և պրակտիկ գործողություններ՝ ուղղված ոչ միայն որոշակի ուսումնական առարկայից գիտելիքների, կարողությունների և հմտությունների ինքնուրույն տիրապետմանը, այլև նրանց ստեղծագործական մտածողության և ընդունակությունների զարգացմանը **(Новоселов С., 1999)**:

Ստեղծագործական բնույթ ունեցող ուսումնական խնդիրների այս օրինակ սահմանումը հիմք է տալիս սահմանելու նաև «ուսումնաստեղծագործական գործունեություն» հասկացությունը: Դա ուսումնական գործունեության այնպիսի ձև է, որն ուղղված է ուսումնական-ստեղծագործական խնդիրների լուծմանը, այդ գործունեության արդյունքը յուրահատուկ է, նոր ու նշանակալի:

Ն.Ֆ. Տալիզինան, դիտարկելով վերը սահմանված հասկացությունները, հանգում է այն եզրակացության, որ ուսումնաստեղծագործունեության արդյունավետ իրականացումը և հաջողությունը կախված են նրանից, թե որքանով կհաջողվի ուսուցչին սովորողների ուսումնական գործունեությունը ուղղորդել դեպի նրանց համար գործունեության նոր ձևին՝ ստեղծագործականին: Ահա թե ինչու ստեղծագործական գործունեության իրականացման կարևոր նախապայման է ուսուցչի և աշակերտի փոխադարձ գործունեությունը, որն ուղղված է աշակերտի՝ ուսումնական նյութի մեջ ստեղծագործական խնդիրներ տեսնելու, ձևակերպելու և լուծելու կարողությունների ձևավորմանը **(Талызина Н., 1998)**:

Տարրական դպրոցի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեությունը ենթադրում է ուսումնական տարբեր առարկաների՝ մաթեմատիկայի, մայրենիի, կերպարվեստի, երաժշտության, տեխնոլոգիայի դասերին ստեղծագործական խնդիրների, առաջադրանքների, խաղերի ընդգրկում (հորինողական, կառուցողական, հետազոտական և այլն)՝ ուղղված կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Ստեղծագործական խնդիրների և առաջադրանքների դասակարգման մեջ առանձնացնում ենք երեք մակարդակ՝

1. առաջադրանքներ, որոնք նախապատրաստում են ստեղծագործական գործունեության (ստեղծագործական տարբեր կատարողական գործունեության մեջ),
2. առաջադրանքներ, որոնք սովորողներին մղում են հետազոտական գործունեության, մոդելավորման, գործունեության ալգորիթմի որոնման,
3. առաջադրանքներ, որոնք ուղղված են դերային խաղերում, գեղարվեստական գործունեության մեջ անհատականության դրսևորմանն ու ինքնաբացահայտմանը:

Սովորողների ուսումնական և ստեղծագործական գործունեության կազմակերպման ժամանակ կիրառվող առաջադրանքների ընտրության խնդրին մենք հանգել ենք հետևյալ մոտեցմանը.

1. Ուսումնական գործունեության ընդհանուր համակարգում ուսումնաստեղծագործական խնդիրների տեղի որոշում՝

- նպատակադրում և ակնկալվող արդյունքի հայտորոշում որոշակի խմբի առաջադրանքների կատարման ընթացքում,
- առաջադրանքի կատարման արդյունքի քննարկման կազմակերպման տեղի և ժամանակի որոշում,

- առաջադրանքի կատարման արդյունքի համեմատում և համադրում տեսական գիտելիքներին ու ստեղծագործական պրակտիկ գործունեությանը:

2. **Ստեղծագործական առաջադրանքների կատարման ուղղությամբ ինքնուրույն գործունեության կազմակերպում՝**

1. առաջադրանքի կատարման անհրաժեշտության, կարևորության և նշանակալիության ըմբռնման դրդապատճառների ձևավորում,
2. գործունեության կազմակերպման ձևերի կանխորոշում (անհատական, խմբային, ընդհանուր),
3. ստեղծագործական գործունեության արդյունավետության գնահատման չափանիշների որոշում:

- գործունեության կազմակերպման ձևերի ու միջոցների համատեղ քննարկում և ընտրություն,
- քննարկման արդյունքների հանրագումարի վերլուծություն,
- ստեղծագործական կարողությունների զարգացման վերաբերյալ գնահատողական կարծիքների արտահայտում, հետագա գործունեության վերաբերյալ հանձնարարականների առաջադրում:

Ստեղծագործական առաջադրանքների կատարման ժամանակ կրտսեր դպրոցականների մեջ ձևավորվում են ներանձնային փոփոխություններ, որոնք հագեցնում են հետևյալ խմբի որակների ձևավորմանը (աղյուսակ).

Աղյուսակ

Մանկավարժական պահանջներ	Գործունեության ուղղվածությունը	Անձնային որակների ձևավորումը
Հոգևոր - բարոյական զարգացում	Դրդապատճառային	Ստեղծագործելուն, արարմանը, նորացմանն ու փոփոխմանն ուղղված խնդիրներ ու նպատակներ առաջադրելու ցանկություն և կարողություն

	Ուսումնաստեղծագործական	Գթասրտություն, համբերություն, ապրումակցություն, պատասխանատվություն, հանդուրժողականություն, բարյացակամություն
	Ռեֆլեքսիվ	Քննադատական մոտեցում, օբյեկտիվություն, հարմարվողականություն, հարգանք այլոց կարծիքի և գնահատականի նկատմամբ
Ստեղծագործական ինքնազարգացում և անդրադարձ կատարելու ունակության ձևավորում	Դրդապատճառային	Ինքնահարգանք, խորաթափանցություն, հայտորոշման և գնահատման կարողություն
	Ուսումնաստեղծագործական	Անկախություն, ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողություն, հակում դեպի ռիսկը, հնարամտություն
	Ռեֆլեքսիվ	Օբյեկտիվություն, իր արարքները, վարքը, գործունեությունը հետահայաց գնահատելու կարողություն
Ստեղծագործական կարողությունների զարգացում	Դրդապատճառային	Կայուն դրդապատճառներ և նպատակադրում, խորաթափանցություն, հարցասիրություն, հետաքրքրվածություն, հափշտակվածություն, հակում նորի բացահայտմանը, հետևողականություն
	Ուսումնաստեղծագործական	Հնարամտություն, համառություն, հաստատակամություն,

		հնարամտություն, երևակայություն՝ նոր գաղափարներ առաջարկելու ունակություն, հակում ստեղծագործաբար փոփոխություն կատարելուն, ներքին պայքար և ոգևորվածություն, խանդավառություն, ինքնատիպություն, անկրկնելիություն
	Ռեֆլեքսիվ	Առաջացած հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը հիմնավորված արտահայտելու ունակություն

Թվարկված որակները ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնական կողմնորոշիչներն են, որոնք, սակայն, համալրման կարիք ունեն: Այդ որակները, ինչպես նշված է աղյուսակում, դրսևորվում են սովորողների դրդապատճառային, ուսումնաստեղծագործական և ռեֆլեքսիվ գործունեության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կարող ենք ասել, որ ուսումնական գործունեության ընթացքում ստեղծագործական խնդիրների ու առաջադրանքների համալիրի մշակումը և մեթոդապես ճիշտ կիրառումը նպաստում են կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Աշակերտների սոցիալականացմանը, զարգանում է սոցիալական և անձնական փորձը: Այն հնարավորություն է տալիս կրտսեր դպրոցականին ինքնաիրացման, ինքնաարտահայտման և իհարկե նորը ստեղծելու, քանզի յուրաքանչյուր աշխատանքում երեխան ամբողջությամբ արտահայտում է ինքն իրեն, իր աշխարհընկալումը, կյանքի երևույթների իր ըմբռնումը և գնահատումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Андреев В. (1988)**, Диалектика воспитания и самовоспитания творческой личности, Казань, Изд-во Казанского университета.
2. **Новоселов С. (1999),** Теория творчества: Понятийно-терминологический аппарат, Метод. Пособие, Екатеринбург, Дворец молодежи.
3. **Пономарев Я. (1976),** Психология творчества, Москва, “Наука”.
4. **Развитие творческой личности через систему работы в тренинге-семинаре по саморазвитию (1998)** / Под общ. ред. Н.П. Анкиеевой; сост. Н.В. Клопова, Бердск, Муниципальное образовательное учреждение Центр образования «Пеликан».
5. **Талызина Н. (1998)**, Педагогическая психология, Москва, Академия.

REFERENCES

1. **Andreev V. (1988)**, Dialektika vospitaniya i samovospitaniya tvorcheskoy lichnosti /Dialectics of education and self-education of the creative personality/, Kazan, Publishing House of Kazan University.
2. **Novoselov S. (1999)**, Teoriya tvorchestva: Ponyatiyno-terminologicheskiy apparat /Theory of creativity, Conceptual and terminological apparatus/, Methodical manual, Yekaterinburg, Youth Palace.
3. **Ponomarev Ya. (1976**), Psikhologiya tvorchestva /Psychology of creativity/, Moscow: Nauka.
4. **Razvitiye tvorcheskoy lichnosti cherez sistemu raboty v treninge-seminare po samorazvitiyu /Development of the creative personality through the system of work in a training seminar on self-development (1998)** / Edited by N.P. Ankieyeva; compiled by N.V. Klopova, Berdsk, Municipal Educational Institution Education Center "Pelican".
5. **Talyzina N. (1998)**, Pedagogicheskaya psikhologiya /Pedagogical psychology/, Moscow, Akademiya.

Amalya Sahakyan

Development of Primary School Students' Creative Abilities through the Use of Modern Educational Technologies

Conclusion

Key words and expressions: *Creative abilities, modern pedagogical technologies, co-creation lessons, set of exercises, personal development.*

This article examines the issue of developing creative abilities in younger schoolchildren using the latest pedagogical technologies. New approaches have been developed for utilizing innovative technologies and interactive methods to effectively foster students' creativity in the learning process at the elementary school level. A series of co-creative lessons, creative tasks, and exercises have been designed to enrich elementary school pedagogy with new theoretical and methodological frameworks.

An example of this is the use of project-based technology, the effectiveness of which depends on the presence of creative project thinking in students, their ability to reason about phenomena and situations, their interests, their selection of project content and objectives, and the availability of an information field related to the object or phenomenon under study. According to this method, students, based on their personal interests, work together with the teacher to design a practical task that is familiar or important to them. The goal of this approach is not only to gain knowledge but also to apply it effectively in practice and use it to solve various everyday problems.

Human beings are inherently creative, and it is the teacher's task to reveal, develop, and enrich a child's natural talent, and to apply it in practice when solving various pedagogical challenges. Creative tasks and exercises help to unlock the inner creative potential of each child and contribute to the development of interpersonal relationships among children.

Амалия Саакян

Развитие творческих способностей младших школьников с применением современных педагогических технологий

Заключение

Ключевые слова и выражения: *Творческие способности, новейшие педагогические технологии, уроки сотворчества, комплекс упражнений, личностное развитие.*

В статье рассматривается проблема развития творческих способностей младших школьников с использованием новейших педагогических технологий.

Разработаны новые подходы к использованию новейших технологий и интерактивных методов для обеспечения эффективности развития творческих способностей учащихся в процессе обучения в начальной школе, а также комплекс уроков совместного творчества, творческих заданий и упражнений, которые позволят обогатить педагогику начальной школы новыми теоретическими и методическими положениями. Примером может служить использование проектной технологии, эффективность которой определяется наличием у учащихся творческого проектного мышления, способностью рассуждать о явлениях и ситуациях, интересами, выбором содержания и цели проекта, наличием информационного поля по объекту изучения или явлению. Согласно этой технологии, учащиеся, исходя из собственного интереса, совместно с преподавателем проектируют знакомую или важную для них практическую задачу. Цель данной технологии — не только получить знания, но и уметь правильно применять их на практике и решать с их помощью многие проблемы в повседневной жизни.

Человек по своей природе — существо творческое, и задача педагога — раскрыть, развить и обогатить природный талант ребенка и использовать его на практике при решении различных педагогических задач. Творческие задания, комплекс помогают раскрыть внутренний творческий потенциал каждого ребенка, способствуют формированию межличностных отношений у детей.

ԱՄԱԼՅԱ ՍԱՀԱԿՅԱՆ - «Ռոսլին» արվեստի և հումանիտար գիտությունների ակադեմիայի դասախոս: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր մանկավարժություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա, սոցիալական մանկավարժություն: Հեղինակ է շուրջ 15 հոդվածի: am_sahakyan@yahoo.com

АМАЛИЯ СААКЯН - преподаватель Академии искусств и гуманитарных наук «Рослин», Аспирант кафедры педагогики Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна. Область научных интересов включает общую педагогику, начальную педагогику и методику, социальную педагогику.Автор около 15 научных статей. am_sahakyan@yahoo.com

AMALYA SAHAKYAN - Lecturer at the Roslin Academy of Arts and Humanities, PhD candidate at the Department of Pedagogy, Khachatur Abovian Armenian State Pedagogical University.Her research interests include general pedagogy, elementary pedagogy and methodology, and social pedagogy.Author of approximately 15 scholarly articles. am_sahakyan@yahoo.com

Խմբագրություն է ուղարկվել 22.02.2025թ.
Հանձնարարվել է գրախոսության 07.03.2025թ.
Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.